



«ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՅՄԱՆ» 17 ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

Նպատակ 1. Ոչ աղքատությանը.ամենուրեք վերացնել աղքատությունը՝ իր բոլոր ձևերով ու դրսևորումներով:

Նպատակ 2. Ոչ սովին.վերացնել սովը, հասնել պարենային ապահովության ու բարելավված սնուցման, խթանել գյուղատնտեսության «Կայուն Զարգացման»-ը:

Նպատակ 3. Առողջություն և բարեկեցություն.ապահովել առողջ կյանք ու խթանել բարեկեցություն բոլորի համար՝ անկախ տարիքից:

Նպատակ 4. Որակյալ կրթություն.ապահովել ներառական ու որակյալ կրթություն բոլորի համար և խթանել ողջ կյանքի ընթացքում ուսման հնարավորությունները:

Նպատակ 5. Գենդերային հավասարություն.հասնել գենդերային հավասարության:

Նպատակ 6. Մաքուր ջուր և սանիտարական պայմաններ.ապահովել բոլորի համար մաքուր ջրի ու սանիտարական պայմանների հասանելիություն և դրանց կայուն կառավարումը:

Նպատակ 7. Մատչելի և մաքուր էներգիա.ապահովել բոլորի համար մատչելի, հուսալի, կայուն և ժամանակակից էներգիայի հասանելիություն:

Նպատակ 8. Արժանապատիվ աշխատանք և տնտեսական աճ. խթանել շարունակական, համապարփակ ու կայուն տնտեսական աճ, արդյունավետ զբաղվածություն և արժանապատիվ աշխատանք բոլորի համար:

Նպատակ 9. Արդյունաբերություն, նորարարություն և ենթակառուցվածքներ. ստեղծել դիմակայուն ենթակառուցվածքներ, աջակցել ընդգրկուն ու կայուն արդյունաբերության զարգացմանը և խթանել նորարարությունը:

Նպատակ 10. Կրճատված անհավասարություն. նվազեցնել անհավասարությունը երկրների ներսում և դրանց միջև:

Նպատակ 11. Կայուն քաղաքներ և համայնքներ.քաղաքներն ու բնակավայրերը դարձնել ներառական, դիմակայուն, անվտանգ և կայուն:

Նպատակ 12. Պատասխանատու սպառում և արտադրություն.ապահովել սպառման և արտադրության կայուն մոդելներ:

Նպատակ 13. Գործողություն՝ ի նպաստ կլիմայի. ձեռնարկել անհապաղ գործողություններ՝ պայքարելու կլիմայի փոփոխության և դրա ազդեցությունների դեմ:

Նպատակ 14. Կյանքը ջրի տակ.ապահովել օվկիանոսների, ծովերի ու ջրա-
յին պաշարների պահպանությունը և կայուն օգտագործումը՝ հանուն «Կայուն
Զարգացման»:

Նպատակ 15. Կյանքը ցամաքում.պաշտպանել և վերականգնել ցամաքային
էկոհամակարգերն ու խթանել դրանց կայուն օգտագործումը, ապահովել ան-
տառների կայուն կառավարումը, պայքարել անապատացման դեմ, դադարեց-
նել և շրջադարձել հողերի վատթարացումը, կասեցնել կենսաբազմազանության
կորուստը:

**Նպատակ 16. Խաղաղություն, արդարություն և ամուր հաստատություն-
ներ.** խթանել խաղաղ և ներառական հասարակությունների կառուցումը՝ հա-
նուն «Կայուն Զարգացման», բոլորի համար հասանելի դարձնել արդարությու-
նը, բոլոր մակարդակներում ստեղծել արդյունավետ, հաշվետու և ներառական
հաստատություններ:

Նպատակ 17. Համագործակցություն՝ նպատակների համար.կատարելա-
գործել ու ակտիվացնել «Կայուն Զարգացման» նպատակների իրականաց-
ման միջոցներն ու գլոբալ գործընկերությունը: